



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.1 (27)**

##### **Естественные и физико-математические науки**

(География и геология, информатика и прикладная математика,  
биология, химия, фармацевтика, физика и радиоп физика)

##### **Natural and Physical-Mathematical Sciences**

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics,  
Biology, Chemistry, Pharmacy, Physics and Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 1.1 (27)

### **Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ**

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական  
մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան  
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան  
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան  
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան  
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով  
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան  
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան  
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան  
Ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան  
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան  
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան  
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան  
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան  
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրոսյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեյան  
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան  
ֆ.մ.գ.թ. Մ. Ալեքսանյան  
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

**Редакционная коллегия:**

д.г.н., проф. Т. Ваданян  
д.б.н., проф. Л. Навасардян  
д.ф.м.н., проф. Р. Алавердян  
д.ф.м.н., доц. А. Балабекян  
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов  
д.ф.м.н., доц. Т. Акобян  
к.г.н., доц. С. Суварян  
к.г.н., доц. Г. Алексанян  
к.г.н., доц. М. Григорян  
к.б.н., доц. О. Паносян  
к.т.н., доц. О. Ароян  
к.ф.м.н., доц. С. Мхитарян  
к.х.н., доц. И. Алексанян  
к.х.н., доц. А. Мартирян  
к.ф.м.н., ассист. А. Манаселян  
к.ф.м.н., ассист. А. Ваданян  
к.ф.м.н. М. Алексанян  
к.ф.м.н. Т. Абрамян

**Editorial Board**

DSc, Prof. T. Vardanyan  
DSc, Prof. L. Navasardyan  
DSc, Prof. R. Alaverdyan  
DSc, Associate Prof. A. Balabekyan  
DSc, Associate Prof. Y. Mamasakhlishov  
DSc, Associate Prof. T. Hakobyan  
PhD, Associate Prof. S. Suvaryan  
PhD, Associate Prof. G. Aleksanyan  
PhD, Associate Prof. M. Grigoryan  
PhD, Associate Prof. H. Panosyan  
PhD, Associate Prof. H. Haroyan  
PhD, Associate Prof. S. Mkhitaryan  
PhD, Associate Prof. I. Aleksanyan  
PhD, Associate Prof. A. Martiryan  
PhD, Assistant Prof. A. Manaselyan  
PhD, Assistant Prof. A. Vardanyan  
PhD M. Aleksanyan  
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈՒԳԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,  
Էլ. փոստ՝ sss@ysu.am  
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

## Հակոբյան Անի

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ  
բակալավրիատի ուսանող  
Գիտական ղեկավար՝ ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան  
Էլ. փոստ՝ [akobyan97@mail.ru](mailto:akobyan97@mail.ru)

### ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Զբոսաշրջությունն այսօր բավական կայուն տեմպերով զարգանում է Հայաստանի Հանրապետությունում: Զարգացած երկրներում զբոսաշրջության ոլորտը համարվում է տնտեսության առաջնային ոլորտ և ապահովում երկրի եկամուտների մեծ մասը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն մի քանի տարի է՝ զբոսաշրջության ոլորտը Հայաստանում ևս հայտարարվել է տնտեսության առաջնային ոլորտներից մեկը՝ ապահովելով երկրի եկամուտների մեծ մասը: Բայցևայնպես, իրավական մի շարք հիմնախնդիրներ կան, որոնց պետք է ուշադրություն դարձնել և լուծումներ տալ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ զբոսաշրջության իրավական կարգավորումների վերաբերյալ փաստաթղթերը, պետական քաղաքականության ծրագրերը, իրավական արդի հիմնախնդիրները, որոնց կարգավորումը կնպաստի երկրում ոլորտի զարգացմանը:

Օրենսդրության կատարելագործումը բխում է գործող իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությունից, որն առաջացել է զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման անհրաժեշտությունից, այդ թվում՝ նպաստելով հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տարածքային տնտեսական համաչափ զարգացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը և այլն: Ուստի պետք է մշակվի զբոսաշրջության զարգացման միասնական ռազմավարություն՝ հիմք ընդունելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ զբոսաշրջության ոլորտի զարգացման արդյունավետությունն ուղղակիորեն կախված է պետության աջակցությունից: Պետական քաղաքականությունն այս ոլորտում առաջին հերթին պահանջում է նորմատիվային անհրաժեշտ դաշտի ձևավորում: Հաշվի առնելով այն, որ զբոսաշրջությունը երկրում հայտարարված է որպես գերակա ճյուղ, ավելի է կարևորվում իրավական այն դաշտը, որում գործում է այս ոլորտը: ՀՀ-ում զբոսաշրջային ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը ձևավորում են ՀՀ Սահմանադրությունը,

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը», «ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիրը», և ՀՀ զբոսաշրջության զարգացման վերաբերյալ տարբեր տարիներին ընդունված պետական ծրագրերն ու իրավական ակտերը [2]: ՀՀ կառավարությունը վերջին տարիներին ընդունել է զբոսաշրջային և հարակից ոլորտները կարգավորող օրենսդրական մի շարք փաստաթղթեր ևս, հաստատել է «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման հայեցակարգը» և «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը», որտեղ ներկայացված է ՀՀ տարածքում առողջարանային զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը:

Զբոսաշրջության ոլորտում ՀՀ կառավարության վարած կայուն քաղաքականության շնորհիվ ոլորտի գերակայությունը համարվում է ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկը: ՀՀ զբոսաշրջության ոլորտի ներկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի կառավարությունը տնտեսության պետական զարգացման հայեցակարգային մոտեցումներում մեծ տեղ է հատկացնում այս բնագավառում պետական նպատակաուղղված քաղաքականություն վարելուն, որը ներկայացված է ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրում: Ծրագրում զբոսաշրջային ինդուստրիան ամբողջությամբ ներառվում է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում: Ինչպես նաև կառավարությունը նպատակադրում է 2017-2022 թթ. ձեռնարկվող քայլերի և միջոցառումների արդյունքում զբոսաշրջային այցելուների տարեկան թիվը հասցնել առնվազն 3 միլիոնի [6]:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի կարգավորման գործում առանցքային դերակատարություն ունի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2003 թ.-ի դեկտեմբերի 17-ին: Այստեղ ներկայացված են զբոսաշրջային բնագավառի պետական քաղաքականության ընդհանուր դրույթները՝ նպատակները, զբոսաշրջիկների շահերը, իրավունքները, պարտականությունները և անվտանգության խնդիրները:

Զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական նպատակները, գերակա ուղղությունները և միջոցները սահմանված են վերոնշյալ օրենքում, մասնավորապես՝ զբոսաշրջության ընթացքում քաղաքացիների իրավունքների ապահովումը, զբոսաշրջային այնպիսի համակարգի ստեղծումը, որը բավարարում է ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների պահանջ-մունքները, նպաստում նոր աշխատատեղերի ստեղծմանը, պետության և նրա քաղաքացիների եկամուտների ավելացմանը, միջազգային կապերի զարգացմանը, զբոսաշրջային գրավչություն ունեցող ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանմանը, պատմամշակութային ժառանգության և բնության ռացիոնալ օգտագործմանը [1]:

Չբոսաշրջության կառավարման կարևոր գործիք է նաև 2008 թ. փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Չբոսաշրջության զարգացման հայեցակարգը [3]: Հայեցակարգի նպատակն է բնութագրել և գնահատել Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսները, Հայաստանում զբոսաշրջության զարգացման միտումները և հեռանկարները, սահմանել զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները, գնահատել մարտահրավերներն ու որոշել նպատակների իրականացման համար պետական քաղաքականության խնդիրները, ուղղություններն ու սկզբունքները:

ՀՀ-ն, լինելով փոքր երկիր, հսկայական ռեսուրսներ և անհրաժեշտ նախադրյալներ ունի զբոսաշրջային գործունեության կազմակերպման ու զարգացման համար: ՀՀ զբոսաշրջային գործունեության կազմակերպման մեջ մեծ նշանակություն ունեն երկրի բազմաբնույթ լանդշաֆտը, գեղեցիկ բնությունը, բազմատեսակ և հարուստ բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև բնության և տեղանքի մեջ տարրալուծված պատմական հուշարձանները: Դրանց լիարժեք և ճշգրիտ օգտագործմամբ Հայաստանը այս ոլորտում կարող է դառնալ մասնագիտացած ակտիվ և զարգացած երկրներից մեկն աշխարհում: ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը [5]: Շրջակա միջավայրի պահպանությունն ապահովող օրենսդրությունը ՀՀ-ում զարգանում է բնական պաշարների օգտագործման և բնության պահպանության ոլորտների կատարելագործման ուղղությամբ: Բնության, բնության պահպանության, շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման մասին օրենքները, ենթաօրենսդրական ակտերը սերտորեն կապված են զբոսաշրջային գործունեության կազմակերպման հետ, բայց դրանք ուսումնասիրելիս տեսնում ենք, որ՝

- բավականին հին են և վերաշարադրման, վերաձևակերպման կարիք ունեն,
- պետք է զուգահեռներ անցկացնել, որպեսզի օրենքները միմյանց չհակասեն և մեկը մյուսին լրացնեն, ինչպես նաև դրանք ցույց տալ հղումներով,
- օրենքների մեծ մասում բացակայում են զբոսաշրջության ոլորտին վերաբերող կարգավորումները կամ իրավական սահմանափակումները:

Այս կետերը վերաբերում են նաև վերոնշյալ իրավական բոլոր այն փաստաթղթերին, որոնք անմիջականորեն կապված են զբոսաշրջության ոլորտին: Ոլորտի զարգացման և ճիշտ կառավարման մեխանիզմ ընտրելու համար անհրաժեշտ է վերանայել ոչ միայն զբոսաշրջային գործունեությանը վերաբերող օրենքները, այլև դրան առնչվող իրավական մյուս փաստաթղթերը:

ՀՀ զբոսաշրջության մասին օրենքում (ընդունված 17.12.2003 թ.-ին) ներկայացված են զբոսաշրջային բնագավառի պետական քաղաքականության ընդհանուր

դրույթները՝ նպատակները, զբոսաշրջիկների շահերը, իրավունքները, պարտականությունները և անվտանգության խնդիրները: Օրենքում առկա մի շարք բացթողումներն ու խնդիրները վերանայվել են 2017 թվականին՝ Զբոսաշրջության կոմիտեի և համապատասխան մասնագետների կողմից: Վերանայման արդյունքում մշակվել է՝ «Զբոսաշրջության մասին», «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը: Օրենքների նախագծերում ներառվել են գործող օրենքների բացթողումները, կատարվել են լրացումներ, մասնակի կամ ամբողջությամբ վերանայվել են առանձին կետեր և դրույթներ [4]: Կարևոր լրացումներից է «ԼԻՑԵՆ-ԶԱՎՈՐՄԱՆ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 2001 թվականի մայիսի 30-ին) 43-րդ հոդվածի աղյուսակը, այն է՝ լրացնել 17.1 մասով՝ 1. զբոսավարի գործունեության, 2. ուղեկցորդի գործունեության, 3. զբոսաշրջային օպերատորի գործունեության, 4. զբոսաշրջային գործակալի գործունեության, 5. հյուրանոցային ծառայությունների մատուցման լիցենզավորմամբ: Այս փոփոխությունը հնարավորություն կտա ոլորտում միայն առաջատար և բարձրակարգ ծառայություններ մատուցող ձեռնարկությունների գործունեություն, առաջատար մասնագետների, հմուտ և փորձառու զբոսավարների, տուրօպերատորների և տուրգործակալների գործունեություն: Գործող օրենքի համեմատությամբ օրենքի նոր նախագծում՝

- մանրամասն ներկայացված են օրենքի հիմնական հասկացությունները, «զբոսաշրջային փաթեթ» հասկացությունը, զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը, երթուղին, տուրը:
- Հստակորեն տարանջատված և ներկայացված են զբոսաշրջային սուբյեկտները (դրանց լիցենզավորման և ստանդարտացման ընթացակարգերը) և օբյեկտները:
- Հյուրանոցային ցանցերի, սննդի ձեռնարկությունների, ավտոբուսների որակավորման ընթացակարգերը:
- Նախագծում ներառված են նաև զբոսաշրջության ոլորտի վարչական ռեգիստրը և զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանը:
- Զբոսաշրջության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ սահմանվում է պետական հսկողություն:

ՀՀ զբոսաշրջային ոլորտի օրենսդրության կատարելագործմանը զուգընթաց պետք է կիրառվի այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի երկրում մասսայական զբոսաշրջությունից անցում կատարել կայուն զբոսաշրջության: Այս դեպքում կառավարությունը զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիր կազմելիս հաշվի



կաննի ՀՀ տարածքային ներուժը, համապատասխան և բարձրորակ ենթակառուցվածքների առկայությունը, սպասարկող մասնագետներին և մարդկային ռեսուրսները: Հաշվի առնելով վերը նշվածների բացակայությունը, կարող ենք ասել, որ մեր երկիրը պատրաստ չէ 3 մլն զբոսաշրջիկ ընդունելու: Այսպիսով, իրավական կարգավորման համակարգը չի կարող հետ մնալ հասարակական կյանքի փոփոխություններից, և զբոսաշրջության պես դինամիկ զարգացող ոլորտի փոփոխությունները նույնպես պետք է արտացոլվեն իրավական ակտերում: Զբոսաշրջության ոլորտի պետական արդյունավետ քաղաքականության իրականացման համար անհրժեշտ է շահագրգիռ բոլոր կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ և արդյունավետ համագործակցություն:

Զբոսաշրջության իրավական կարգավորմամբ ոլորտի զարգացման անհրժեշտությունից ելնելով, աշխատանքի ուսումնասիրության արդյունքում ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները՝

1. պետք է ուսումնասիրել զբոսաշրջության բնագավառի միջազգային իրավական համակարգը, մշակել այն և տեղայնացնել ՀՀ-ում:

2. Կարգավորել զբոսաշրջության առանձին ուղղությունները և դրանք կենտրոնացնել դեպի Հայաստանի Հանրապետության մարզեր, այդ թվում նաև՝ գյուղական համայնքներ:

3. Պետք է տարանջատել ներքին և ներգնա զբոսաշրջության գնային քաղաքականությունը և ամրագրել դա օրենքով:

4. Բարելավել համաշխարհային շուկային Հայաստանի հասանելիությունը՝ տրանսպորտային հասանելիության և մուտքի-ելքի մատչելիության բարձրացման միջոցով,

5. Պետք է մշակել և կիրառման մեջ դնել զբոսաշրջիկների և այցելուների էթիկայի կոդեքս՝ հաշվի առնելով զբոսաշրջության էթիկայի համաշխարհային կանոնակարգը:

6. Ոլորտում պետք է ներգրավված լինեն միայն համապատասխան մասնագիտությանը տիրապետող, վերապատրաստում անցած և լիցենզավորված մասնագետները:

7. Օրենքով սահմանել և հստակ նշել, թե ովքեր են պատասխանատու ոլորտի կառավարման, ռեսուրսների համաչափ բաշխման, ծրագրերի իրականացման համար՝ առանձնացնելով պետական և մասնավոր սեկտորի գործառույթները:

8. Օրենքով պետք է ամրագրել նոր դեստինացիաների, զբոսաշրջային ուղղությունների ստեղծման կարգը և չափորոշիչները:

9. Զբոսաշրջային գործունեության արդյունքում բնօգտագործման չարաշահման դեպքերը ևս պետք է ներառել օրենքում՝ սահմանելով տույժեր և տուգանքներ:

10. Վերանայել և հաստատել զբոսաշրջության մասին ՀՀ օրենքի նոր նախագիծը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը», Երևան, 17 դեկտեմբերի, 2003:
- [2] **Մարգարյան Ա.**, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման իրավական կարգավորումները», Երևան, 2017, էջ 77-84:
- [3] «ՀՀ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ», Երևան, 2008:
- [4] «Զբոսաշրջության մասին», «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր, Երևան, 2017:
- [5] ՀՀ Սահմանադրություն, Երևան, 6 դեկտեմբերի, 2015:
- [6] ՀՀ Կառավարության ծրագիր 2017-2022, Երևան, 2017, էջ 52:

Հակոբյան Անի

### **ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր՝** զբոսաշրջություն, օրենք, ենթաօրենսդրական ակտ, հայեցակարգ, իրավական կարգավորում, պետական քաղաքականություն, կայուն զբոսաշրջություն:

Սույն հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ զբոսաշրջության իրավական կարգավորումների վերաբերյալ փաստաթղթերը, պետական քաղաքականության ծրագրերը, իրավական արդի հիմնախնդիրները, որոնց կատարելագործումը բխում է գործող իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությունից: Իրավական համակարգի բարելավման խնդիրն առաջացել է զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացման և նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում մրցունակության ամրապնդման ու բարձրացման անհրաժեշտությունից, այդ թվում՝ նպաստելով համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տարածքային տնտեսական համաչափ զարգացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը և այլն:

Акобян Ани

## **АКТУАЛЬНЫЕ ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ТУРИСТИЧЕСКОГО СЕКТОРА РА**

Ключевые слова: туризм, закон, подзаконный акт, концепция, правовое регулирование, государственная политика, устойчивый туризм.

В статье рассматриваются документы по правовому регулированию туризма в Армении, программы государственной политики, актуальные правовые вопросы, улучшение которых связано с необходимостью совершенствования существующей правовой системы. Проблема совершенствования правовой системы возникла в результате динамичного развития индустрии туризма и необходимости укрепления и повышения конкурентоспособности Армении и армянского туристического продукта на мировом туристическом рынке, включая развитие туризма в общинах, пропорциональное территориальное развитие, развитие человеческих ресурсов, международное сотрудничество и т. д.

Hakobyan Ani

## **RELEVANT LEGAL ASPECTS OF RA TOURISM SECTOR**

**Keywords:** tourism, law, sub-legal act, concept, legal regulation, state policy, sustainable tourism.

The article examines documents on legal regulation of tourism in Armenia, state policy programmes, actual legal issues, the improvement of which stems from the need to improve the existing legal system. The problem of improving the legal system has emerged as a result of the dynamic development of the tourism industry and the need to strengthen and enhance the competitiveness of Armenia and the Armenian tourism product in the global tourism market, including the development of tourism in communities, proportional territorial development, human resource development, international cooperation, etc.